

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Կարեն Արթուրի Ղարախանյանի «Հողի մշակության համակարգերի արդյունավետության գնահատումը Հրազդանի տարածաշրջանում աշնանացան ցորենի օրինակով» թեմայով ատենախոսության աշխատանքի վերաբերյալ ներկայացված 2.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Լանջային հողերի վրա ինտենսիվ գյուղատնտեսական գործունեության վարումը, որի հիմքում ընկած է ամենամյա թևավոր վարը, առանց հաշվի առնելու ռելիեֆի ագրոէկոլոգիական առանձնահատկությունները, հանգեցնում է հողային ծածկույթի դեգրադացմանը: Այդ հողերի վրա էրոզային գործընթացների ուժեղացումը հանգեցնում է հողում օրգանական նյութերի և դրանց բերրիության կտրուկ նվազմանը: Վատթարանում են հողերի ագրոֆիզիկական, ագրոքիմիական և կենսաբանական հատկությունները և որպես հետևանք, նվազում են մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական հողերի արտադրողականությունը: Հողապաշտպան միջոցառումների անտեսման պարագայում, էրոզիայի ուժգին դրսևորման շրջաններում, տարեկան կորչում է մինչև 24 տ/հա համեմատաբար բերրի հողազանգված: Հանրապետության թույլ և միջակ էրոզացված լեռնային շագանակագույն հողերում, չէրոզացված տարածքների հետ համեմատած, աշնանացան ցորենի բերքատվությունը նվազում է 4,9-17,0, գարնանացան գարունը՝ 4,7-10,1 և բազմամյա խոտաբույսերի խոտի բերքը՝ 5,2-8,4 գ/հա-ով: Լեռնային սևահողերում դրանք համապատասխանաբար նվազում են՝ 2,7-19,1, 2,3-12,0 և 2,1-8,4 գ/հա-ով:

Այդ տեսանկյունից հանրապետության լեռնային շրջաններում հողերի բերրիության արդյունավետ օգտագործման, դրանց երաշխավորված պահպանության, ընդարձակ վերարտադրության և մշակաբույսերի բերքատվության բարձրացման ուղիների և ճանապարհների մշակումը, հանդիսանում է ժամանակակից գյուղատնտեսության հիմնական խնդիրը, այն ունի գործնական, գիտական և մեծ բնապահպանական նշանակություն: Նման հարցերի ուսումնասիրություններին է նվիրված Կ.Ա. Ղարախանյանի թեկնածուական ատենախոսությունը:

Գիտական դրույթների և եզրակացությունների ճշտությունը, գիտական նորույթը, հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական դրույթների և եզրակացությունների ճշտությունը պայմանավորված է հետազոտության մեթոդիկայով, հետազոտությունների արդյունքների վերլուծության, դրանց համալիր գնահատման արդյունքներով: Ատենախոսության եզրակացությունները անմիջապես բխում են գիտական նորույթից և հիմնադրույթներից: Դաշտային և լաբորատոր հետազոտությունների հիման վրա բացահայտված են նոր օրինաչափություններ, որոնք դրսևորվում են հողի մշակման տարբեր ձևերի ազդեցության ներքո:

Մասնավորապես հեղինակի կողմից հետազոտվել է հողի մշակման տարբեր եղանակների ազդեցությունը հողի ագրոքիմիական և ագրոֆիզիկական հատկանիշների վրա, ինչպես նաև դրանց վրա պարարտանյութերի եվ բենտոնիտի կիրառման ազդեցությունը աշնանացան ցորենի աճի, զարգացման, բերքի քանակի ու որակի վրա, մասնավորապես սննդատարրերի կուտակման դինամիկայի և բերքի հետ դրանց օտարման (ելի) վրա:

Հիմնավորվել է առաջարկված միջուցառումների տնտեսական արդյունավետությունը աշնանացան ցորենի մշակության պարագայում:

Ատենախոսի կողմից կատարված են 9 եզրակացություններ և առաջարկություններ, որոնց բովանդակությունը տրամաբանորեն բխում է ատենախոսության գիտական նորույթից և դաշտային և լաբորատոր հետազոտության արդյունքներից: Գիտական եզրահանգումների գիտագործնական արժանահավատությունը հաստատվում է նաև ատենախոսի կողմից արտադրության համար կատարված 2 գործնական առաջարկների բովանդակությամբ, որոնց վերաբերյալ հեղինակի կողմից բերված է արտադրությունում ներդրման մեկ տեղեկանք:

Ատենախոսության, սեղմագրի և հրատարակված հոդվածների համապատասխանությունը կանոնագրի պահանջներին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, իինգ գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից՝ 164 անվանումով, որից 138 օտար լեզվով: Աշխատանքի վերջում ներառված է նաև հավելվածը, որտեղ ներկայացված են դաշտային փորձերի մաթեմատիկական վերլուծության հաշվարկների արդյունքները, ինչպես նաև տարբեր տարիների ընթացքում դաշտային ու լաբորատոր հետազոտությունների կատարման վերաբերյալ նկարները: Աշխատանքի ծավալը կազմում է 103 էջ, որի մեջ ներառված են 12 աղյուսակ և 8 գծապատկեր:

Ատենախոսության հիմնական դրույթների վերաբերյալ հրատարակվել են 7 գիտական հոդվածներ, որից երկուսը առանց համահեղինակների: Բոլոր հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունված գիտական տեղեկագրերում: Եզրակացությունները բխում են ատենախոսության գիտական նորությից, դաշտային և լաբորատոր հետազոտությունների արդյունքներից:

Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն հիմնականում արտացոլում է ատենախոսության հիմնական գիտական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Հետազոտական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները, մասնավորապես հողի ռեսուրսախնայողական մշակման սկավառակման եղանակը և մշակման այդ ֆոնի վրա հաստատված պարարտանյութերի ու հողաբարելավիչի կիրառման ժամկետի արդյունավետ տեխնոլոգիաները, կարելի է կիրառել ՀՀ տափաստանային գոտու անջրդի երկրագործական պայմաններում, ինչպես նաև աշխարհի, համանման բնակլիմայական պայմաններ ունեցող, այլ երկրներում:

Բարձր գնահատելով հեղինակի կողմից կատարված տեսական, փորձնական և մեթոդական լայնածավալ հետազոտությունների արդյունքները, ուշադրության արժանի են նաև աշխատանքի արժեքը չնսեմացնող, ատենախոսական աշխատանքում տեղ գտած մի շարք անճշտություններ, բացթողումներ և թերություններ, որոնք բերված են ստորև դիտողություններում:

- Էջ 32, պարբերություն 1 գտնում ենք, որ հետազոտությունների նյութը և մեթոդը բաժնում, նաև ատենախոսության և սեղմագրի մնացած մասերում, տարընթերցումներից խուսափելու համար, մշակության ձևերը ներկայացվելին հենց մշակության անվանումներով; մասնավորապես փորձի տարբերակներում՝
 1. Փոցխում (4-5 սմ) խորությամբ, որը անվար մշակության (նվազագույն) եղանակներից մեկն է և այն պայմանական «փոցխում» անվանելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն իսկապես փոցխում է:
 2. Միայն փխրեցում կամ սկավառակում (10-12 սմ) խորությամբ: Լավ կլիներ ներկայացվել ուղղակի սկավառակում անվանմամբ:
- Ատենախոսության էջ 8 ռեփեֆը նկարագրելիս գրված է Կոտայքի մարզը գտնվում է Արարատյան գոգավորության նախալեռան հյուսիս-արևելքում: Կարծում ենք նախալեռան բառը պետք է հանվի, կամ շարադասությունը պետք է փոխվի:
- Ատենախոսության էջ 9, 3 տող գրված է՝ գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալայան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Կարծում ենք լեռնատափաստանայինի փոխարեն պետք է գրվի լեռնային սևահողեր, իսկ դարչնագույն հողերի փոխարեն՝ անտառային դարչնագույն հողեր, իսկ 8-րդ տողում գորշ դարչնագույն հողերի փոխարեն՝ անտառային դարչնագույն հողեր:

- Էջ 10, աղյուսակ 1.1 կարծում ենք աղյուսակի 1-տողից պետք է հանվի Ֆանտան բառը, կամ ձևակերպումը պետք է փոխվի:
- Էջ 12, ներքևից 2-րդ պարբերություն, բուսական գոտիներում պետք է ավելացվի չոր տափաստանային գոտին:
- Էջ 17 2-րդ պարբերություն՝ ցորենի տարածվածությունը և հաջողությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ այն չունի մրցակից մշակման տարածքի լայնության առումով: Կարծում ենք լայնության տեղ պետք է լինի ընդարձակության առումով:
- Էջ 19 վերջին պարբերություն, 2 տող՝ մինչդեռ կալիումը առավելապես օգտագործվում է բույսերի կողմից վաղ աճի փուլում...կարծում ենք, որ պետք է ձևակերպվի աճի վաղ փուլերում:
- Էջ 32, պարբերություն 2, 3-րդ տող՝ որտեղ հաշվարկվել կատարվել են 1 մ² տարածքում: Կարծում ենք պետք է լինի հաշվարկները կատարվել են 1 մ² տարածքում:
- Էջ 35, պարբերություն 1, 4-րդ տող՝ Աշնան վերջին, երբ ջերմաստիճանը հասնում է 0-5°C-ի, բույսերի մոտ ստեղծվում են պայմաններ, որոնց առկայությամբ բջջահյութը ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ սառչում է, և շնորհիվ այդ հանգամանքի՝ բույսերը ձեռք են բերում ձմեռադիմացկունություն: Կարծում ենք սառչելու փոխարեն պետք է լինի խտանում է:
- Էջ 43, աղյուսակ 4.2.2. Վիճարկելի է հողի խտության հետ կապված տվյալները: Մասնավորապես, ինչով է բացատրվում խորը վարի տարբերակում հողի այդպիսի մեծ խտությունները համեմատած մյուս տարբերակների հետ: Երբ է իրականացվել չափումները և վերջապես ինչքան է հողերի բնական խտությունը:
- Աղյուսակ 4.3.1 վերնագիրը շատ երկար է և ֆենոփուլերը ինչու չի սկսվում ծլումից, թփակալումից և այլն:
- Էջ 49, 1-ին 2-րդ տող մոմային հասունացման փուլում՝ 85.5-86.1 սմ, իսկ լրիվ հասունացման փուլում՝ 98.1-99.0 սմ: Կարծում ենք թվերը ստուգման կարիք ունեն:
- Տվյալների առկայության դեպքում ցանկալի կլիներ հետազոտական աշխատանքում ներկայացվել աշնանացան ցորենի ցանքերում մոլախոտվածության մասին տվյալներ, քանի որ մշակության ձևերը զգալի ազդեցություն ունեն դրա վրա:
- Էջ 69, գծապատկեր 4.5.2 վերնագրում ավելացնել՝ հողի մշակման տարբեր եղանակների և հողաբարելավիչների ազդեցությունը աշնանացան ծղոտի բերքի վրա, ավելացնել աշնանացան ցորենի ծղոտի բերքի վրա:
- Էջ 74, 1-ին պարբերություն, 7-րդ տող՝ Մեծ թվով գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ դեգրադացվել են հողերի ոչ պատճառ կառավարման պատճառով, պետք է լինի պատշաճ կառավարման:
- Ինչքան է եղել փորձերում ցանքի նորման և 1 մ²-ում ծած բույսերի քանակությունը:

- Էջ 81, վերջին պարբերություն, 4-րդ տող՝ Այս փաստը ևս մեկ անգամ ընդգծում է, որ խորը վարումը, անկախ պարարտացման ձևից, պայմանավորում է բարձր արտադրական ծախսեր և նվազ շահութաբերություն: Կարծում ենք խորը վարումը պետք է լինի խորը վարը:

Եզրակացություն

Ամփոփելով Կարեն Արթուրի Ղարախանյանի «Հողի մշակության համակարգերի արդյունավետության գնահատումը Հրազդանի տարածաշրջանում աշնանացան ցորենի օրինակով» թեմայով ատենախոսության աշխատանքը գտնում ենք, որ այն կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իր գիտական հետազոտությունների արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արտադրությանը արված առաջարկություններով նպատակաուղղված է հիմնավորելու աշնանացան ցորենի ցանքերի տակ, հողի մշակության համակարգերի արդյունավետությունը, Հրազդանի տարածաշրջանի օրինակով: Գտնում ենք, որ Կարեն Արթուրի Ղարախանյանի ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, իսկ հեղինակը Կարեն Արթուրի Ղարախանյանը արժանի է Զ.01.01 «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա, ագրոքիմիա և ագրոէկոլոգիա» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀԱԱՀ «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի» գիտական կենտրոն
մասնաճյուղի, Հողագիտության, ագրոքիմիայի և
հողերի աշխարհագրության բաժնի վարիչ,
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր



Ա.Օ. Մարկոսյան

գ.գ.դ Ա.Օ. Մարկոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀԱԱՀ գիտական քարտուղար, գ.գ.թ., դոցենտ



Գ.Վ. Ավագյան

